

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՅՄԱՆԱԿԱՐԳ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մարտի 12-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Նիստի մեկնարկին վարչապետը հայտարարեց, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, կապված աշխարհում կորոնավիրուսի (թագավարակ) զանգվածային տարածման հետ, հայտարարել է պանդեմիա (համաճարակ):



ինքնագոհության հիմք հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ մարտահրավերներն օր-օրի ավելանում են:

- Մենք պարտավոր ենք համապատասխան միջոցներ ձեռնարկել: Առաջին հերթին, պետք է հոգանք տարեցների, երեխաների եւ միմյանց մասին: Կառավարության բոլոր մարմիններն անցնում են շուրջօրյա աշխատանքի արտակարգ պայմանակարգի, հատկապես դա վերաբերում է առողջապահության, ներքին գործերի, կրթության, արդարադատության, արտաքին գործերի եւ ֆինանսների նախարարությունների համապատասխան գերատեսչություններին, որոնք գործում են Վրաստանի սահմաններում,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Ներկա դրությամբ, Վրաստանում պաշտոնապես գրանցվել է կորոնավիրուսի 25 հաստատված դեպք, այդ թվում 12 տարեկան երեխա, կարանտինային գոտում է 298, իսկ ստացիոնարում հսկողության տակ՝ 46 մարդ:

- Ելնելով աշխարհում տիրող ցավալի վիճակագրությունից՝ կարող ենք ասել, որ մենք համեմատաբար կարողանում ենք հաղթահարել այս մարտահրավերը, սակայն չունենք թուլանալու կամ

միմյանք անցնում են շուրջօրյա աշխատանքի արտակարգ պայմանակարգի, հատկապես դա վերաբերում է առողջապահության, ներքին գործերի, կրթության, արդարադատության, արտաքին գործերի եւ ֆինանսների նախարարությունների համապատասխան գերատեսչություններին, որոնք գործում են Վրաստանի սահմաններում,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԵՐԿՐՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ԶԵՄ ՏԵՍՆՈՒՄ»

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՅԱԿԱԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Մարտի 13-ին հատուկ անցկացված մամուլի ասուլիսին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ այս պահին Վրաստանում արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտություն չի տեսնում:

Վարչապետի խոսքով, մի քանի պետություններ արդեն հայտարարել են արտակարգ դրություն, սակայն այն երկրները, որոնք հայտարարել են արտակարգ դրություն, հայտարարել են նաեւ, թե ինչ միջոցառումների անցկացում է նշանակում այս դրությունը:

- Եթե դիտարկենք այն միջոցառումները, որոնք մենք իրականացնում ենք, կտեսնենք, որ չնայած արտակարգ դրություն չենք հայտարարել, սակայն մի քանի շաբաթ է, որ արդեն սկսել ենք այդ միջոցառումները: Այսօր ես արտակարգ դրու-

թյուն հայտարարելու անհրաժեշտություն չեմ տեսնում, սակայն հնարավոր է դրա անհրաժեշտությունը վաղը լինի: Հատկապես հաշվի առնելով, որ այլ երկրներում հայտարարված արտակարգ դրության միջոցառումները մենք վաղուց ենք սկսել,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Վարչապետն անդրադարձավ նաեւ երկրի կառավարության կողմից տնտեսական աջակցության ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների հարցին:



Ինչպես հայտարարեց վարչապետը, կառավարության տնտեսական թիմը կազմել է ծրագիր, որը նախատեսում է հնարավոր ճգնաժամի հետեւանքը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԸՆՏՐՈՒԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԿԼԻՆԻ 120 ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԵՎ 30 ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԴԱՏԳԱՄԱՎՈՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԸ ԵՎ ԸՆԳԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅՎԱՅՄԱՆ ԿՐԳԻ ՀԱՐՅՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա նոյեմբերին խորհրդարանականների կողմից 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները միայն համամասնական ընտակարգով եւ գրոյակական ընտրաշեմով անցկացնե-

լու օրինականագծի տապալումից հետո, միացյալ ընդդիմությունը անցկացրեց բողոքի ակցիաներ: Ի վերջո, կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը եւ միացյալ ընդդիմությունը, Վրաստանում հավատա-

րմագրված եվրամիության անդամ երկրների դեսպանների միջնորդությամբ, սկսեցին բանակցություններ ընտրական օրենսգրքի փոփոխությունների շուրջ:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՎՐԱՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐՅԵՐԸ

Աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մարտի 10-ին հանդիպում ունեցավ եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը եւ եվրոպական խորհրդի նախագահը քննարկել են Հայաստան-ԵՄ հարաբերություններին վերաբերող հարցերի լայն շրջանակ: Քննարկման առանցքում է եղել Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների լայն օրակարգը:



Կողմերը պատրաստակամություն են հայտնել է՛լ ավելի զարգացնել ՀՀ-ԵՄ հետագա համագործակցությունը, այդ թվում՝ առևտրատնտեսական կապերը: Եվրոպական խորհրդի նախագահն ընդգծել է, որ կարելի է Հայաստանի ընտրած բարեփոխումների ճանապարհը, եւ հավելել, որ Եվրոպական միությունը շարունակելու է ակտիվ համագործակցել եւ աջակցել մեր երկրին ժողովրդավարական, այդ թվում դատաիրավական ոլորտում բա-

րեփոխումները կյանքի կոչելիս: Նիկոլ Փաշինյանը եւ Շառլ Միշելը մտքեր են փոխանակել՝ հունիս ամսին Բրյուսելում կայանալիք Արեւելյան գործընկերության առաջիկա գագաթաժողովից իրենց սպասելիքների շուրջ:

Վարչապետ Փաշինյանն ընդգծել է՝ Հայաստանը հետեւողականորեն առաջ է շարժվելու ժողովրդավարության զարգացման ու այն ամրապնդելու ուղղությամբ, մարդու իրավունքների պաշտպանությունը եւ օրենքի լիարժեք գերակայությունն ապահովելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ՈՒԹ ԴԵՊԷ

Հայաստանի առողջապահության նախարարությունը հայտարարություն է տարածել, որում հայտնում է, որ, մարտի 13-ի դրությամբ, ընդհանուր առմամբ, Հայաստանում առկա է կորոնավիրուսով վարակվելու 8 դեպք:

Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն անդրադարձել է Հայաստանում մարտի 11-ին հաստատված կորոնավիրուսի երեք դեպքին: - Երեկ արձանագրվել է եւս երեք դեպք, եւ փաստացի այսօր ունենք նոր կորոնավիրուսով վարակի հաստատված ութ դեպք:

Պացիենտներից երեքն այս պահին սիմպտոմներ չունեն, չնայած դիմելու պահին ունեցել են ջերմություն, եւ միայն մեկն այս պահին ունի զանգատներ, թոքաբորբ, ջերմում է, ստանում բուժում: Մնացած պացիենտները բուժում չեն ստանում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՍԱՅՄԱՆԱՓՎԿՈՒՄԵՐ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԴԱՏՃԱՌՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՅՄԱՆԸ 10 ՕՐՈՎ ՓԱԿՎՈՒՄ Է

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կառավարության աշխատակազմի մամուլ ծառայությունը, մարտի 13-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Հեռախոսազրույցի արդյունքում, ընդունվել է համատեղ որոշում, ըստ որի 2020 թվականի մարտի 14-ից, 10 օրով կասեցվում են երկու երկրների միջեւ քաղաքացիների տեղաշարժերը: Միաժամանակ, կողմերը պայ-

մանավորվել են, որ կապահովվեն հայրենիք վերադառնալու ցանկություն հայտնած քաղաքացիների անարգել մուտքը իրենց երկրներ:

Այս սահմանափակումները տարածվում են տրանսպորտային բոլոր տեսակների վրա:

Սահմանափակումները չեն տարածվում բեռնափոխադրումների վրա:

Տեղեկատվության մեջ նշված է նաեւ, որ մարտի 14-ից 10 օրով փակվում է նաեւ Վրաստան-Ադրբեջան սահմանը:

